

1074

ՊՐՈՑ. Խ. ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Պրակ I

9(1)

Ս-17

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1938

30 MAY 2011

ՀԻՍՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

15 JUL 2005

9(7)
Ա-17
այ

ՊՐՈՖ. Խ. ՍԱՄՎԵԼՅԱՆ

**ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1988

1074

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ


Նախնադարյան հասարակության պատմության առարկան յեվ աղբյուրները

I

Մարքս-լենինյան պատմահայեցողության համեմատ՝ մարգ-
կային պատմության զարգացումն ընթացել է չորս սոցիալ-տնտե-
սական ֆորմացիաներով, այն է՝ արխայիկ, ստրկատիրական
կամ անտիկ, ֆեոդալական և կապիտալիստական կամ բուրժուա-
կան: Առաջին ֆորմացիան անդասակարգային է, իսկ մյուս յե-
րեքը՝ դասակարգային: Ահա այդ արխայիկ ֆորմացիային է
պատկանում նախնադարյան հասարակությունն արտադրության
յուրահատուկ յեղանակով: Նախնադարյան-հասարակությունը,
կամ այլապես նախադասակարգային հասարակությունը, ծագում
է, ապա զարգանում է իբրև նախնադարյան-կոմունիստական
հասարակություն, ուր տիրում է կոլեկտիվ սեփականություն,
կոլեկտիվ արտադրություն և կոլեկտիվ սպառում: Ըստ Կ. Մարք-
սի, նախնադարյան հասարակությունը, կամ արխայիկ ֆորմա-
ցիան, հիմնված է արտադրության համայնական՝ նախնադարյան-
կոմունիստական յեղանակի վրա, վորի բնորոշ գիծը կազմում էր
«միասնականություն աշխատողի և արտադրության միջոցների
միջև», միասնականություն աշխատանքի ու սեփականության,
այլ խոսքերով՝ արտադրության միջոցների հասարակական սե-
փականությունը*):

Նախնադարյան-կոմունիստական հասարակության վախճա-
նը վորոշվում է այն մոմենտից, յերբ ծագում է դասակարգա-
յին հասարակություն և կազմվում է պետություն: «Տոհմային

*) К. Маркс—Капитал, т. 3-ий стр. 308, изд. 1932 г.



Խմբ. Հ. ԽՈՒՇՈՅԱՆ
Տեկ. Խմբ. Խ. ԽԱԶԱՏՐԵԱՆ
Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գլավխոսի լիազոր Տ.—9569 Պատվեր № 154, Տիրաժ 1500
Հանձնված է արտադրության 5 մայիսի 1938 թ.
Ստորագրված է ապրիլի 17 մայիսի 1938 թ.

Ուսուցիչ՝ Կերակավորման Ինստիտուտի տպարան, Մաքբաի փ. № 17 Օերևան

միությունների վրա խարսխված հին հասարակությունն, — ասում է Ֆ. Ենգելը, — պայթել էր նոր զարգացող հասարակական դասակարգերի ընդհարումից, նրա տեղն առաջանում է նոր հասարակություն, վոր վերածվում է պետութայն:

Ահա այդ նախնադարյան-կոմունիստական հասարակութայն գոյացումը, նրա զարգացումը, նրա հետագա քայքայումը և այս դասակարգային հասարակութայն վերածվելը՝ դառնում են այն առարկան, վորով ղբադվում է նախնադարյան հասարակութայն պատմությունը:

II

Նախնադարյան հասարակութայն պատմութայն ուսումնասիրութայն աղբյուրները

Ամեն մի հասարակութայն պատմությունը, լինի դա անդասակարգային կամ դասակարգային, լինի դա հին կամ նոր դարերի, կարելի յե ուսումնասիրել միայն վորոշ սղբյուրների, վատահելի վկայությունների հիման վրա:

Նախնադարյան, կամ նախադասակարգային, հասարակությունն սկզբնական, ամենավաղ սոցիալ-տնտեսական ֆորմացիան է, վոր գոյություն է ունեցել մարդկային պատմութայն հնագույն դարաշրջանում: Այդ նախնադարյան հասարակությունից մեղ չեն հասել գրավոր վկայություններ, վորովհետե ւ այդ հինավուրց ժամանակներում մարդիկ չեն ունեցել արդի իմաստով գրավոր տառանիշեր: Մինչ՛ դեռ ավելի հետնագույն ժամանակների հասարակությունների պատմությունը ներկա գիտությունն ուսումնասիրում է գլխավորապես գրավոր աղբյուրների, բազմաթիվ վավերագրերի (դոկումենտների) հիման վրա, վորոնք մեղ հասել են այդ հասարակություններից:

Մեկայն ժամանակակից գիտությունը կարողացել է թափանցել նախնադարյան պատմութայն խորքերը, պատռել նրան քողարկող խավորը և, չնայած գրավոր հուշարձանների բացակայութայն, վերականգնում է հիմնական գծերով նախադասակարգային հասարակութայն բազմադարյան ալետր անցյալը:

Նախնադարյան այդ պատմութայն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել շնորհիվ այն աղբյուրների, վորոնք առա-

ջաղրում է արդի գիտությունն իր մի շարք գիսցիպլիններով: Այդ գիտական գիսցիպլիններն են՝ հնագիտությունը, աղագրությունը, ֆոլկլորը, լեզվագիտությունը, մարդաբանությունը, վորոնք իրենց հետազոտություններով մատակարարում են այն հիմնական նյութերը, վորոնք ծառայում են իբրև աղբյուր նախնադարյան պատմութայն:

Այսպիսով հնագիտությունը, աղագրությունը, ֆոլկլորը, լեզվագիտությունը (լինգվիստիկա), մարդաբանությունը հանդիսանում են ոժանդակ պատմական գիտություններ, վորոնք լուսաբանում են և հիմնավորում նախնադարյան պատմութայն պրոբլեմները:

Ուստի մի առ մի տեսութայն առնենք վերը թված այդ գիտական գիսցիպլիններն ու նրանց նշանակությունը նախնադարյան պատմութայն ուսումնասիրութայն գործում:

III

Նախնադարյան հնագիտական հուշարձանները յեվ նրանց քվագրությունը

Հնագիտություն (արխեոլոգիա):— Կ. Մարքսն ու Ֆ. Ենգելը կարևոր նշանակություն եյին տալիս հնագիտութայնն իրենց պատմական ուսումնասիրությունների ընթացքում: Կ. Մարքսը, ի հարկե, առաջին հերթին գրավում էր արդիականութայն պրոբլեմներով, վորի ըմբռնման ու վերակառուցման բանալին էր նա վորոնում և այն գտավ, հիմնելով զիալիկտիկական մատերիալիզմի թեորիան: Բայց և այնպես իբրև հետևողական զիալիկտիկ մարքսիստ՝ նա մոտենում էր արդիականությունն ըմբռնելուն վորպես պատմագետ: Ուստի նա աջքաթող չեր անում հնագիտությունը, վորի ուսումնասիրությունը նա վնչ միայն ոգտավիտ և ուսելի յեր համարում, այլ և անհրաժեշտ էր գտնում արդիականությունը խոր ու բազմակողմանի կերպով ըմբռնելու տեսակետից: Մոսկով կոպերատիվ (կոյեկտիվ) աշխատանքի մասին՝ Կ. Մարքսը ասում է. «Հին ասորեստանյան, յեզիպտական և այլ նման կոլլեկցիաները Լոնդոնի և ուրիշ յեվրոպական թան-

գարաններում վկայում են աշխատանքի կոտպերատիվ պրոցեսներին մասին:*)

Հնագիտության առարկան՝ իրային մնացորդները, կամ, ինչպես ասում են, իրային հուշարձաններն են, այսինքն պեղումների ժամանակ կամ յերկրի յերեսին հայտնաբերված հնությունները, վորոնք պահպանվել ու մեղ են հասել հնագույն դարերից: Կ. Մարքսը նշում է. «Ինչպես վոր վոսկրների մնացորդների կառուցվածքը կարևոր նշանակություն ունի չքացած կենդանական առարկաների կազմվածքի ուսումնասիրություն համար, այնպես ել աշխատանքի գործիքների մնացորդները կարևոր են անցկացած սոցիալ-տնտեսական ֆորմացիաների ուսումնասիրություն համար**): Թեև Կ. Մարքսն այստեղ խոսում է միայն աշխատանքի գործիքների մասին, իբրև կարևորագույն նշանակություն ունեցող՝ չքացած ֆորմացիաների նկատմամբ, սակայն սրանով չի ժխտվում այլ իրային մնացորդների կարևոր նշանակությունը, վորոնց հիման վրա հնարավորություն ենք ստանում լրացնել և ամբողջացնել հնագույն դարաշրջանների պատմությունը: Արևոր հնության զանազան դարաշրջաններից մեկ հասած իրային մնացորդները կարող են լինել՝ աշխատանքի գործիքներ, զենքեր, կենցաղային իրեր, բնակայանների ու բնակարանների և այլ կառույցների մնացորդներ ու հետքեր, դամբաններ, արվեստի մնացորդներ և այլն: Ահա այդ իրերը հայտաբերելու, նկարագրելու և հետազոտելու գործով զբաղվում է հնագիտությունը:

Յերբ խոսք է լինում հնագիտության մասին, անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ, թե ինչ և իրենից ներկայացնում հնագիտությունը բուրժուական գիտություն և մարքսիստական պատմագրություն մեջ:

Բուրժուական հնագիտություն առարկան դա հնագիտական իրերն են և նրանց ուսումնասիրությունն, ընդ վորում հնագիտությունը ճանաչել են իբրև ինքնուրույն գիտություն, միանգամայն անկախ ու անջատ պատմագիտությունից: Այդ հնագիտությունը հետաքրքրում է հենց իրն, իբրև այդպիսին, առարկան հենց ինքնին և վնչ թե նրանց որինաչափությունը, զար-

*) К. Маркс—Капитал, т. 1-ый, стр. 250, примечание.

***) К. Маркс—Капитал, т. 1-ый, стр. 121.

գացումը, վնչ թե նրանց կապը հասարակական զարգացման հետ: Ուստի տեսություն էյին առնվում հնագիտական իրերի արտաքին ձևերն ու ներքին բաղադրությունն առանց հաշվի առնելու նրանց ֆունկցիոնալ (հարագործական) նշանակությունը: Այսպիսով ստացվում է իրերի տիպոլոգիական ուսումնասիրություն, ֆորմալիստական իրագիտություն (вещеведение): Թեև բուրժուական հնագիտությունը վերացականորեն ընդունում է, վոր իրերի փոփոխությունը դարերի ընթացքում առնչություն ունի հասարակության կյանքում տեղի ունեցող փոփոխությունների հետ, բայց չեթ ուսումնասիրվում այդ հասարակությունն ըստ էյություն, այլ միայն արտաքին կերպով, խորամուխ չլինելով նրա շարժման ուժերի և սկզբնապատճառների հետազոտության մեջ: Ուսումնասիրվող իրերի ու առարկաների փոփոխություններն ու զարգացումը նրանք բացատրում են կանգնելով իրենց դասակարգային գաղափարախոսություն վրա, իրենց դասակարգային տիրապետությունը հիմնավորող տեսությունների վրա, որինակ՝ ռասսայական թեորիան, միգրացիոն թեորիան, նվաճումների կամ բացարձակ ազդեցություն թեորիան և այլն: Հնագիտական իրերի փոփոխական հաջորդությունը բացատրում են ժողովուրդների տեղաշարժումով, յեկավ մի նոր ժողովուրդ և նվաճեց, իսկ հինը վոչնչացավ կամ գաղթեց մի այլ վայր, այդ նոր ժողովուրդը բերում է իրեն հատուկ կենցաղային իրեր, կամ գաղթողը տանում է իր կենցաղային իրերը նոր վայր, ուր առաջ բացակայել են այդպիսի իրեր: Նմանապես իրերի արտաքին մասնակի փոփոխությունները բացատրում են այսպես ասաց ավելի կուլտուրական ու ռասսայորեն ավելի բարձր և ընդունակ ժողովուրդների բնածին ազդեցությամբ:

Միանգամայն ուրիշ տեսակետի վրա յե կանգնած մարքսիստական պատմագիտությունը: Ըստ այնմ հնագիտությունը վնչ թե ինքնանիւրի, ինքնուրույն մի գիտություն է, այլ պատմագիտությանն ոժանդակ պատմական դիսցիպլին: Մարքսիստական ուսմունքի համաձայն, հնագիտական իրը, լինելով ըստ էյություն անցյալի իրային մնացորդ, կամ հասարակության գործունեության արտադրանք է նրա զարգացման այս կամ այն աստիճանում (աշխատանքի գործիքներ, զենքեր, զարդարանքներ, կենցաղային իրեր, բնակարանների մնացորդներ և

այլն) և կամ բնության մեջ տեղի ունեցած պրոցեսներն արագասիք և (կենդանիների, բույսերի և այլ մնացորդներ): Այլապես ասած, հնագիտական կամ իրային հուշարձաններն արտացոլում են սոսկ այն պրոցեսները, վորոնք կատարվել են հասարակության և բնության մեջ: Ուստի հնագիտական մնացորդները չի կարելի ուսումնասիրել իբրև սոսկական իր նրա կոնկրետ առկայությամբ, այլ պետք է ուսումնասիրվեն վորպես պատմական պրոցեսի հուշարձան, հասարակական հարաբերությունների ցուցանիշ, վորպես համապատասխան պատմական միջավայրում սոցիալական ֆունկցիա կրող: Այս տեսակ ուսումնասիրությունը կատարվելու յե վորպես պատմական հետազոտության որգանական ու բաղկացուցիչ մասը բոլոր այլ տեսակի պատմական աղբյուրների ուսումնասիրության կապակցությամբ:

Հնագիտական հուշարձաններն թվագրությունը:—Հնագիտական հուշարձաններն, իբրև պատմության աղբյուրներ, ստանում են կարևոր նշանակություն այն դեպքում, յերբ վորոշվում է այդ հուշարձանների ժամանակագրությունն, այն է՝ նրանց ծագման, տեղության և վախճանի տարիները: Դրանով հնարավոր է լինում պատկերացնել նախնազարյան պատմության յերևույթները: Թեև ժամանակագրության հարցերը կարևոր նշանակություն ունեն մարդկային հասարակության պատմությունն ուսումնասիրելիս, բայց և այնպես նրանք չպետք է դառնան գիտական հետազոտության գլխավոր ու վերջնական նպատակ, վորովհետև ժամանակը հանդիսանում է վնչ թե պատճառ, այլ միայն ուսումնասիրվող պրոցեսների ընթացքի չափանիշ:

Ժամանակագրության վորոշումը քիչ թե շատ ճշտությամբ հնարավոր է այն հնագիտական հուշարձանների նկատմամբ, վորոնք ծագել են, այսպես կոչված, պատմական դարերում, յերբ յեղել են դիր, տառանջաններ, այսինքն դասակարգային հասարակություններում: Առանց հնարավոր չափով ճիշտ վորոշելու հուշարձանի սկզբնավորությունն ու գոյությունը, մենք ի վիճակի չենք լինի ստույգ ըմբռնելու, բացատրելու այդ հուշարձանը, հետևապես այն ուսումնասիրել ըստ ամենայնի:

Սակայն նախադասակարգային հասարակությունից մեզ չեն հասել գրավոր յուշարձաններ, վորովհետև այն ժամանակները

քիչ թե շատ զարգացած նշանագրեր չեն յեղել, իսկ մյուս, մեզ հասած իրեղեն հուշարձանների վրա չենք գտնում վորևե նշումներ ժամանակագրական թվերի մասին: Նույն իսկ այն դեպքում, յերբ հնագիտական մշակված յեղանակով կարելի յե լինում վորոշել թվագրությունը, նախնազարյան հասարակության պատմության ուսումնասիրողը կիրառում է ժամանակագրական նշանակումների ճշտության միանգամայն այլ աստիճաններ, քան դասակարգային հասարակության ուսումնասիրողը: Դասակարգային հասարակության պատմության հետազոտողը, հիմնվելով գրավոր ղոկումենտների վրա, հնարավորություն է ունենում վորոշել թվագրությունները մանրակրկիտ ճշտությամբ, իսկ նախադասակարգային հասարակության ուսումնասիրողը ստիպված է ժամանակագրությունը թվարկել հարյուրամյակներով (դարերով), դեռևս հազարամյակներով, հազվագեպ տասնամյակներով: Սակայն այս վերջին ձևի թվարկության, մանավանդ ավելի վաղագույն ժամանակաշրջանների վերաբերմամբ, ճշտության այդպիսի աստիճանն էլ այնքան հավաստի չի կարող համարվել: Ուստի նախնազարյան պատմության թվարկությունը շատ անգամ կրում է հարաբերական ժամանակագրության բնույթ: այստեղ արտույտ թվարկություն լինել չի կարող:

Հնագիտության մեջ թվագրությունը վորոշելու համար կիրառում են գլխավորապես յերկու յեղանակ՝ ստրատիգրաֆիկ և տիպոլոգիկ:

Ստրատիգրաֆիկ յեղանակը կայանում է նրանում, վոր պեղումների և հնագիտական հետախուզումների ժամանակ ուղապեղումների և հնագիտական վորոշում յերկրային խավերի (յերկրաբանական նստվածքների) հաջորդականությունը, հողի բաղադրությունը և ըստ այնմ պեղածոյի ինչ խորության մեջ գտնվելը և այլն: Յերկրային խավերն ու տեսակները, արխայիկ որգանական կյանքի մնացորդները (բույսեր, կենդանիներ) հնարավորություն են ընձեռնում վորոշելու կուլտուրական շերտերի այն է՝ մարդկային վոսկրների ու գործիքների մնացորդներ պարունակող խավերի ժամանակագրական հասակը: Ստրատիգրաֆիկ յեղանակով հետազոտության ոժանդակիչ են դառնում այն-

պիսի գիտութեաններ, ինչպես յերկրաբանութեանը (գեոլոգիա) և հնեաբանութեանը (պալեոնտոլոգիա):

Տիպոլոգիկ յեղանակը հիմնված է համեմատութեան սկզբունքի վրա: Հետազոտվում են նախնական տեխնիկայի միջոցները (գործիքներ) և մանավանդ արտադրութեանները (կավե ամաններ, կենցաղային իրեր, զարդարանքներ և այլն) իրենց նմանութեան ու տարբերութեան հատկանիշներով և ապա ըստ այնմ վորոշում են նրանց ժամանակագրութեանը, յելակիտ ունենալով իրեղեն հուշարձանի վորոշ հիմնական գիծը:

Պետք է ասած, վոր այդ յերկու հետազոտական յեղանակները պայմանական են և մինչև այժմ, շնորհիվ բուրժուական հնագիտութեան մեջ տիրապետող մեթոդաբանութեան, չեն ունեւ սպասած արդյունքներ: Յեթե ստրատիգրաֆիական յեղանակը վորոշ վերապահումներով և զգուշ կիրառուելով զեռևս կարելի յէ գիտական համարել ու հարաբերաբար քիչ թե շատ զրական հետևանքների հանգել, ապա նույնը չի կարելի ասել տիպոլոգիականի մասին:

Ստրատիգրաֆիան չի տալիս իրերի փոփոխման որինաչափութեանը և բացատրութեանը. նա տալիս է միմիայն իրերի փոփոխման հաջորդականութեանը եմպիրիկ պատկերացումով:

Տիպոլոգիկ յեղանակն իր համեմատական միջոցներով տանում է դեպի ձևական, ֆորմալիստական յիլասիֆիկացիա, վոր աղավաղում, խեղաթյուրում է իրեղեն յերևույթներում արտահայտվող պատմական պրոցեսի պատկերը: Իրային հուշարձանների համեմատումն ու տարբերումն ըստ նրանց վոճի, ձևի ու արտաքին նշանների կարող են զրական նշանակութեան ունենալ այն դեպքում, յերբ հաշվի յեն առնվում համեմատվող իրերի ֆունկցիաները և նրանց ամնչութեանն այն հասարակութեան սոցիալական կառույցքի հետ, վորին վերաբերվում են այդ իրերը, մի բան, վորն այժմ կատարվում է մ. րքսիստական պատմագիտութեան կողմից: Իրեղեն հուշարձանների ձևի վերլուծումն առանց կապելու նրանց սոցիալական բովանդակութեան հետ՝ գիտական տեսակետից միանգամայն սպարդյուն է:

Ազգագրական նյութ. նրա ոգսագործման յեղանակները

Հնագիտութեան, իբրև նախնադարյան պատմութեան աղբյուր խոշոր առավելութեաններով հանդերձ՝ ունի նաև իր թույլ կողմերը: Հնագիտական նյութերի մեջ անցած-գնացած մարդկային կյանքը չի արտացոլում այնքան վառ ու պարզ: Յերկրի խորքերից հանած իրեղեն մնացորդները համբեն, չունեն այն շունչն ու իմաստը, վոր տալիս են գրավոր հուշարձանները: Ճիշտ է, պեղածո իրերի մեջ շատ անգամ արտահայտվում է նախնադարյան կենցաղն իր տեխնիկայով, գործիքներով ու բնակատե, գերով, բայց և այնպես այդ իրեղեն աղբյուրներում աղոտ գծերով են յերևում նախնադարյան հասարակական ձևերն ու գաղափարախոսական վերնաշինքը:

Ահա այդ բացը վորոշ չափով կարող է լրացնել մի այլ գիտական դիսցիպլին՝ ազգագրութեանը, վոր զբաղվում է ժողովուրդների, ազգերի, ցեղերի նկարագրական ուսումնասիրութեամբ: Վերջին յերեք դարերի ընթացքում՝ շնորհիվ գիտական ճանապարհորդների և հետախույզների, զետոողութեանների ու նկարագրութեանների՝ կուտակվել է հարուստ ազգագրական նյութ գլխավորապես «վայրենի ցեղերի» (Աֆրիկա, Ավստրալիա, Ամերիկա), մասամբ էլ «կուլտուրապես հետամնաց» ժողովուրդների (Ասիա, Կովկաս և այլն) կենցաղի ու հասարակական-տրնտեսական ձևերի մասին:

Ազգագրութեանը (եթնոգրաֆիա) կամ ինչպես Արևմտյան Յեւրոպայի գիտութեան մեջ հաճախ այլապես կոչվող ազգագրանութեանը (եթնոլոգիա) բուրժուական գիտութեան մեջ ճանաչվում է իբրև առանձին, ինքնուրույն գիտութեան, իր հատուկ մեթոդաբանութեամբ: Բուրժուական գիտութեան մեջ ազգագրութեանն իր նպատակային գրույթներում և հետազոտական յեղանակներում արտացոլել է զանազան դասակարգային խրմբավորումների շահերն ու ազդեցութեանները: Այդտեղ նկատում ենք ֆեոդալ-ազնվական դասի մեծապետական ու ազգային-շոքիստական գաղափարախոսութեանը, բուրժուական-կապիտալիստական դասի իմպերիալիստական-գաղութային քաղաքականութեանն իր ռասսայական տեսաբանութեամբ, վոր վերջին

հաշվով հանգում է ֆաշիզմին, և վերջապես մտնր-բուրժուական ուղղութիւնը, վոր ընորոշվում և «ազգասիրութեամբ, ժողովրդ-դասիրութեամբ» և հնութեան ու նահապետական կենցաղի ու-մանտիկ իդեալացումով, տեղական նացիոնալիզմի վերածված: Բայց և այնպէս յիվրոպական գիտութեան մեջ բուրժուական-դեմոկրատական խմբավորումների կողմից ձգտումներ են յեղել ազգագրութիւնը դնել մատերիալիստական կոնցիպիայի հիմ-քերի վրա, սակայն դա արտահայտվել է մերկ եմպիրիզմի և բը-նական գիտութիւնների մեթոդաբանութեամբ: Այդ ուղղու-թեամբ առաջացել էր այսպէս կոչված ազգագրութեան «կլասի-կական դպրոցը», վոր փորձում էր տալ մարդկային կուլտուրայի եւոլյուցիայի սինտետիկ (համադրական) պատկերը. այդպէս էին Ե. Տալլերը, Լիպպերաը, Լետուրնո և այլն: Այդ դպրոցը, վոր յեր-բեմն կոչվում է նաև Եւոլյուցիոն, իր հասարակական-պատ-մական աշխարհայացքով համապատասխանում է լիբերալ բուր-ժուազիայի գաղափարախոսութեանը, վոր զարգացել էր արդյու-նաբերական կապիտալի վերելքի միջավայրում:

Հակադիր տեսակետի վրա յի կանգնած մարքս-լինինյան պատմագիտութիւնն ազգագրութեան նկատմամբ: Ազգագրու-թիւնն, իբրև ինքնուրույն գիտութիւն, իր հետազոտութեան հատուկ ու առանձին առարկայով և մեթոդով, համահավասար պատմութեանը, միանգամայն հակասում է պատմական պրոցեսի գիտելիակայի մարքսիստական ուսմունքին: Ազգագրութիւնը (ազգաբանութիւն) դիտվում է իբրև պատմութեան ոժանդակ գի-տական դիսցիպլին, վոր պետք է կիրառել առավելագոյն չափով պատմական ուսումնասիրութեան բնագավառում, մանավանդ, յերբ մի շարք հարցեր, վորոնք վերաբերում են նախադասակարգային ֆորմացիային դժվարութեամբ են լուսաբանվում և մնում են անվերժանելի: Այդպիսի հարցեր են. 1) Եթնոգենեզի (ժողովուրդ-ների ծագումը) պրոցեսը, եթնիկ ու ազգային խմբերի տարա-գաղթումը. 2) նյութական կուլտուրան իր կոնկրետ տարբերակ-ներով. 3) ընտանիքի ծագումն. 4) սեփականութեան ծագումը. 5) դասակարգերի ծագումը. 6) կրոնի, արվեստի, իրավունքի և այլ վերնաշինքային կատեգորիաների ծագումն ու ձևերը. 7) նախ-նադարյան-կոմունիստական հասարակութեան քայքայման ձե-վերը:

Այսպիսով խորհրդային ազգագրութիւնը, մերժելով ճանա-չել ազգագրութիւնը (ազգաբանութիւն) վորպէս թեորետիկ գիտութիւն, նպատակ է դնում ուսումնասիրել կոնկրետ հա-սարակութիւններ, առանձնապէս այնպիսիներ, վորոնք մինչև այժմ էլ կանգնած են իրենց զարգացման վաղագոյն աստիճան-ների վրա: Ուստի ազգագրական հետազոտութեան առարկան լի-նելու յեն սոցիալ-տնտեսական ֆորմացիաներն իրենց զարգաց-ման ետապներում և կոնկրետ տարբերակներում, նմանապէս կոնկրետ մարդկային հասարակութիւնների և առանձին կուլ-տուրական յերեւոյթների նկարագրական ուսումնասիրութիւն-ները:

Մարքսիստական ազգագրութիւնը թեև հակադիր ու ժխտո-ղական վերաբերմունք ունի դեպի բուրժուական ազգագրու-թիւնը և նոր հիմունքներով է առաջնորդվում ազգագրական հետազոտութիւնների բնագավառում, այնուամենայնիվ նա հաշի յի առնում ու ոգտագործում է այն ազգագրական հում նյութը, վոր անագին չափերով կուտակվել է գրականութեան մեջ վերջին յերևք դարերի յերկարատև ընթացքում շնորհիվ գոնազան ազգագրագետ ճանապարհորդների ու հավաքագրո-յների: Բայց այդ ոգտագործումը պետք է լինի մի կողմից՝ վոր-պէս վերագնահատումն և քննադատութիւն այդ նյութերը հա-վաքագրող ու լուսաբանող բուրժուական ազգագրագետների տե-սութիւնների և մյուս կողմից՝ մարքսիստական մեթոդաբանու-թեամբ վերլուծել և լուսաբանել այդ կուտակված հում նյութը և այդպիսով վերհանել նրանց նշանակութիւնն ու ոգտագոր-ծել իբրև նախնադարյան պատմութեան աղբյուր: Այս դեպքում ազգագրական նյութերը վնչ թե ինքնաբաւ, ինքնուրույն նյու-թեր են դառնում, այլ համադրվում են հնագիտական աղբյուր-ներին և վորոշ չափով լրացնում են այն բացերը, վորոնք նկատ-վում են նախնադարյան պատմութիւնը միմիայն հնագիտական սովյալներով ուսումնասիրելիս:

Ուսմունք մնացուկների մասին: Պատմական համեմատական մեթոդ

Ազգազրական նյութերը պատմականորեն ուսումնասիրելու յերկու կարևոր յեղանակներ են կիրառվում, այն է՝ պատմահամեմատական և վերապրուկների կամ մնացուկների (пережитки) յեղանակ: Թեև այս յերկու հետազոտական յեղանակները ծագել են բուրժուական ազգազրության միջավայրում, բայց և այնպես նրանք կիրառելի յեն նաև խորհրդային ազգազրության մեջ, ի հարկե վնչ այն սխալ ու անընդունելի ձևերով, վորոնք, ինչպես վերը տեսանք, տիրում են բուրժուական գիտության մեջ: Պատմահամեմատական յեղանակն ու վերապրուկների (մնացուկների) յեղանակը մարքսսիստական գիտության մեջ պետք է զինվեն մարքսլենինյան պատմահայեցողությամբ և կիրառվեն գիտելիակալական մատերիատական տեսանկյունով:

Ինչու՞ն են կայանում այդ յերկու հետազոտական յեղանակները:

Պատմահամեմատական յեղանակը—Այս գիտահետազոտական յեղանակը ձգտում է զուգահեռ ուսումնասիրությամբ բաղդատել արդի, կուլտուրական ցածր աստիճանների վրա կանգնած ժողովուրդների սոցիալ-տնտեսական ձևերն իրենց կոնկրետ առանձնահատկություններում և նախնադարյան կյանքով ապրող «վայրենի» ցեղերի կենցաղային յերևույթները, կամ համեմատության է դնում սրանց հետ նմանապես արխայիկ, արդեն անեացած մարդկային հասարակություններն ու սրանց կուլտուրաները: Համեմատություն ասելով՝ պետք է գտնել ու տեսության առնել վորոշ յերևույթների համանման, հոմանիշ դժերը: Ուստի պատմահամեմատական մեթոդը կանգ է առնում նույնանիշ յերևույթների վրա, համեմատության է դնում իրար հետ վնչ թե սոսկ զիպվածական նման տարրերով, այլ եյուլթյամբ իրար համապատասխան կուլտուրաներ՝ թե իրենց ծագումով և թե զարգացման հոմանիշ հանգամանքներով:

Սակայն պատմահամեմատական ուսումնասիրությունը պետք է անպայման կառուցված լինի ստագիականության

(ընթացաշրջանության) վրա, այսինքն ուշադրության պետք է առնել հասարակական դարգացման հտապները և ըստ համապատասխան դարգացման հտապների կիրառել համեմատությունը: Ստագիականությունն անհրաժեշտ պայման է ամեն մի ուսումնասիրական աշխատանքի մեթոդոլոգիական ճշտության: Հետևապես նախքան տվյալ ազգազրական նյութերի տեսության առնելը, անհրաժեշտ է պարզել, թե արդյոք համեմատվող տվյալները համապատասխանում են իրար իրենց ստագիականությամբ: Խոսք չկա, վոր անհանդուրժելի յի տարբեր ստագիաներին (ընթացաշրջաններին) պատկանող ազգազրական նյութերը համեմատել, որինակ՝ նախատոհմային հասարակական հտապին հարող ազգազրական տվյալները համեմատել տոհմայինի հետ, կամ տոհմային, հասարակակարգի մատրիարխատական ստագիային պատկանող ազգազրական տվյալները հոմանիշ համարել պատրիարխատական ստագիային:

Իր առավելություններով հանգերձ՝ ազգազրության պատմահամեմատական ուսումնասիրության յեղանակը, մանավանդ նախնադարյան պատմության վերաբերմամբ, շատ անգամ չի հասնում իր նպատակին: Նա վորոշ չափով հիշեցնում է հնագիտության մեջ կիրառվող տիպոլոգիական յեղանակը և կրում է նույն մեթոդոլոգիական թերությունները, մանավանդ յերբ հարցը վերաբերում է կուլտուրական յերևույթների ժամանակագրությանը: Այս դեպքում ոգնության է գալիս այսպես կոչված՝ Վերապրուկների յեղանակը:

Վերապրուկների յեղանակը— Այս ուսումնասիրական յեղանակը, վորի կիրառումը պարտական ենք ախոնավոր ազգաբան (եթնոլոգ) Եղուարտ Տայրերին, իր եյուլթյամբ նույնպես համեմատական է, բայց մի տարբերությամբ, այս համեմատական յեղանակով մենք ստանում ենք ուղղահայաց հատում, ինքն իր մեջ խորացող հետանկարով (բետրոսպեկաիվ), մինչդեռ պատմահամեմատական յեղանակը տալիս է կուլտուրական հաջորդականության հորիզոնական հատում:

Ամեն մի հասարակության հիմնական ձևը կախված է տվյալ ժամանակաշրջանի արտադրողական ուժերի զարգացման աստիճանից, վորտեղ իբրև ստեղծող, արտադրողական ուժ, առաջին տեղն է բռնում մարդկային աշխատանքը: Այդ արտադրողական

ուժերը մարդկութեան պատմութեան ընթացքում անդադար փոփոխութիւններով, զարգանում են. նրա հետ ել զուգահեռ փոփոխվում և զարգանում են արտադրական ու սոցիալական հարաբերութիւնները: Այս դարավոր, անվերջ ընթացող ու փոփոխվող սոցիալատնտեսական պայմաններում տվյալ մարդկային հասարակութիւնները իր նյութական-հոգևոր կուլտուրայով տարբերվում են նախորդ հասարակութիւններից, յետեւ վերջինները ապրում էլ ինչ ալ տընտեսական ու սոցիալական պայմաններում: Սակայն վորքան ել արագ ու առաջընթաց են զարգանում տնտեսական ձևերն ու փոխվում սոցիալական հարաբերութիւնները, այնուամենայնիվ համեմատաբար դանդաղ են փոխվում մարդկանց հայացքները, կենցաղային սովորութիւնները, վորոնք կազմակերպվել են նախորդ պայմանների ազդեցութեան ներքո: Հին հասարակական հարաբերութիւնները վերափոխվում են նորերի, բայց այդ նորի գոյացումով, նախորդ հին մտայնութեան, հին կենցաղի ապրումները շարունակում են իրենց գոյութեան կռիվը: Նրանք միանգամից անհետ չեն վերանում, այլ պահպանվում են վերապրումներով ու մնացորդներով, վորոնք ստանում են կոնսերվացիոն բնույթի, կոնսերվացիոն (խորհրդանշան) արտահայտումների կերպարանք: Այս մնացուկները շատ անգամ ժողովրդական կյանքում չեն վայելում վաղքի ներգործական դերը, չունեն նախկին հասարակական նշանակութիւնը, բայց և այնպես պահպանում են վորոշ չափով, ի հարկե, ժամանակավորապես իրենց տրադիցիոն (ավանդական) բնույթը:

Այդ մասին Կ. Մարքսը հետևյալ բնորոշ խոսքերով է արտահայտվում. «Բուրժուական հասարակութիւնն արտադրութեան ամենազարգացած ու բազմակողմանի պատմական կազմակերպութիւնն է: Այն կատեգորիաները, վորոնք արտահայտում են բուրժուական հասարակութեան հարաբերութիւնները, նրա կազմակերպութեան ըմբռնումը միաժամանակ հնարավորութիւն են տալիս ըմբռնելու բոլոր հասարակաձևերի կայմութիւնն ու արտադրական հարաբերութիւնները, այն հասարակաձևերի, վորոնք բեկորներից ու տարրերից կառուցվում են բուրժուական հասարակութիւնները, մասամբ շարունակելով քաղաքացիական յոռու յետեւից

նախընթաց ձևերի դեռ չհաղթահարված մնացորդները» (ընդգծումը մերն է):

Ահա այդ մնացուկները կամ վերապրումներն են, վոր հանդիսանում են միջոցներ, վորով հնարավորութիւն ենք ստանում գտնելու արդեն անհետացած համարվող հասարակական յերեւելութիւնների, այժմ ել մութ ու անհասկանալի կողմերի բացատրութեան ու ըմբռնման աղբյուրները: Մնացուկների յեղանակով ու սուբստանցով են ժողովրդական արդի կենցաղային յերեւելութիւնները, հասարակական սովորութիւնները և այլն, վորպեսզի նրանց մեջ հայտաբերվեն անցյալի հետքերը, հնութեան բեկորները, մի խոսքով՝ այն վերապրումները, վորոնք հիշեցնում և նշում են յերբեմնի գոյութիւնն ունեցող, հիմնավորց հասարակական յերեւելութիւնները:

Մ
Օ
Մ
Մ
Մ

VI

Ք ո լ կ լ ո ռ

Ազգագրութեան հետ սերտ կապ ունի Ֆ ո լ կ լ ո ռ ը, կամ ժողովրդական բանահյուսութիւնը, վոր շատ անգամ պատմագիտութեան մեջ դիտվում է վնչ իբրև առանձնակի գիտական դիսցիպլին, այլ ազգագրութեան (ազգաբանութեան) բաղկացուցիչ անբաժանելի մաս, իբրև գաղափարախոսական վերնաշերտ այն մարդկային հասարակութիւնների, վորոնք ազգագրական ու սուբստանցով յետադարձ յեն դառնում:

Թեև Ֆ ո լ կ լ ո ռ ը վերը նույնացրինք ժողովրդական բանահյուսութեանը, բայց դա հիմնականում այնքան ել ճիշտ չէ «ժողովրդական բանահյուսութիւն» ասած տերմինը ավելի նեղ բովանդակութիւնն է ունեցել գիտութեան մեջ և ընդհանրապես կապվել է զբաղմունքի պատմութեան հետ: «Բանահյուսութիւն» իմաստը չի ընդգրկում բանավոր ձևով այն բոլոր յերեւելութիւնները, վորոնք ծառայում են ժողովրդական անցյալ կենցաղի ուսումնասիրութեանը: Բանավոր ստեղծագործութիւնը սահմանադրվել է ժողովրդի մտավոր ու հոգևոր գործունէութեան յեղարկման արտահայտութեան այլ ձևերից ու մի շարք գաղափարախոսական յերեւելութիւններից (կրոնական ծեսեր ու պաշտամունքներ, իրավաբանական հայացքներ, միմիկա, ժեստեր, պարեր, յերգերի յեղանակներ և այլն):

*) Կ. Մարքս — Գաղաքատնտեսութեան քննադատութեան շուրջը, էջ՝ 49—50, 1932 թ. Յերևան:



Տերմին «Ֆոլկլորն» իր ընդգրկած առարկայով ավելի լայն բովանդակութիւնն է ներկայացնում: Այդ տերմինն առաջին անգամ ծագել է անգլիական գիտնական Վիլյամ Տոմսի (1846 թ.) առաջադրութեամբ և այժմ ընդունված է գիտութեան մեջ: Folk — անգլիերեն նշանակում է ժողովուրդ, ժողովրդական, lore — գիտութիւն, իմացութիւն: Այստեղ պետք է հասկանալ թե՛ բանաստեղծական և թե՛ գործնական իմացական ու կրօնական աշխարհազգացողութեան ու աշխարհայացքի արտահայտումն, վոր տակավին չի ստացել այն շերտավորված ձևերը, վոր հատուկ են բարձր կուլտուրայի հասած գրութեանը:

Ուրեմն Ֆոլկլորը՝ ըստ անգլիական տերմինաբանութեամբ նշանակում էր «ժողովրդական իմացութիւն», այսինքն նյութեր մարդուն ըմբռնելու գիտութեան համար: Սակայն նա հետագայում Յիվրոպայում (Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսաստան և այլն) ստացավ հատուկ գիտութեան նշանակութիւն, վորի առարկան է՝ ժողովրդական մասսաների ստեղծագործութիւնն ու կենցաղը բանավոր արտահայտումներով:

Անշուշտ միայն ժամանակակից, այսպես կոչված «վայրենի ցեղերի» մեջ կարող է քիչ թե՛ շատ պահպանված մնալ Ֆոլկլորային նյութը պրիմիտիվ ձևերով, նախնադարյան կուլտուրային հոմանիշ գաղափարախոսութեամբ: Ահա այս նյութերն են մեծ արժեք ներկայացնում նախնադարյան պատմութեան համար վորպես աղբյուրներ:

Սակայն նաև դասակարգային հասարակութեան վորոշ ժողովրդական խավերը, վորոնք տակավին պահպանել են վերապրուկային ձևով նահապետական-տոհմային կենցաղի գծեր և իրենց սոցիալ-տնտեսական հարաբերութիւններով վորոշ չափով դեգերում են բնատնտեսութեան միջնորդում, նմանապես զարգացել են իրենց Ֆոլկլորը: Այս վերջին նյութերը, ի հարկ է համակվել են սոցիալապես շերտավորված հասարակութեան գաղափարախոսութեամբ, բայց ի նկատի առնելով, վոր այդ նյութերը պահպանվել ու զարգացել են գլխավորապես գյուղացիական մասսաների ընդերքում և մասամբ քաղաքային մանր-արհեստավորական ու հետամնաց խավերում, վորոնք դեռևս իսպառ չեն թոթափել իրենցից հին կենցաղի մնացուկները, ուստի այդ դասակարգային ժամանակաշրջանի Ֆոլկլորն էլ ստանում է վորոշ

որոշ արժեք իբրև նյութ՝ նախնադարյան պատմութիւնը լուսաբանելու համար: Վերցնենք որինակ, հայ Ֆոլկլորի հայտնի «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը, վոր թեև կրում է արդեն դասակարգայնորեն շերտավորված հասարակութեան յուրահատուկ գծեր, բայց այդ վեպի մանրազննին վերլուծումը հայտաբերում է հետաքրքիր ու բնորոշ յերևույթներ, վերապրուկային կենցաղային ձևեր, վորոնք մեզ տանում են դեպի տոհմային հասարակութիւնը, և նույն իսկ յերևան են հանում քարեդարյան կուլտուրայի բնորոշ մնացուկներ:

Փոլկլորում արտացոլել են ժողովրդական կենցաղի բազմակողմանի գծեր, աշխարհայացքի և նույնիսկ աշխարհազգացողութեան, այդ դադափարախոսական վերնաշինքի, բնորոշ տարրեր: Նայած Ֆոլկլորի ծագման սոցիալ-տնտեսական միջավայրին և նրա դարավոր զարգացման պրոցեսի յերևույթներին, Ֆոլկլորային նյութն էլ ստանում է համապատասխան բնույթ և ըստ այնմ արժեքավորվում նրա բովանդակութեան նշանակութիւնը:

Կոնկրետացնելով Ֆոլկլորային ուսումնասիրութեան առարկան, պետք է ի նկատի առնենք, վոր Ֆոլկլորի նյութն են կազմում՝ բանավոր ձևով արտահայտված ժողովրդական մասսաների զգացողութեան ու հայեցողութեան արտահայտումները, վորոնց անհատական հեղինակները հայտնի չեն, վորովհետև այդ բանավոր ստեղծագործութիւնները մակարդակ են մասսայի մեջ և իրենց հետագա զարգացումով կրում մասսայական-կոլեկտիվ բնույթ, կորցնելով նախահեղինակի դեմքը: Փոլկլորին են պատկանում ռամկական յերգերը (հարսանիքի, պարերի, մահվան, կրօնական, սիրո, աշխատանքի և այլն), վորոնք ամենամեծ ու հարուստ մասն են կազմում, այնուհետև հեքյաթներ, վիպասանութիւններ, առասպելներ, ավանդութիւններ, հավատալիքներ (անտիպոպուլարութիւններ, նախապաշարութիւններ, դյուլթեր ու մոգականութիւն, կրօնական ավանդութիւններ և այլն), մյուս թաբաղներ, առածներ, հանելուկներ, ասույթներ: Ինչպես ակներև է, այդ ամենը սերտորեն կապված են ազգագրութեան հետ: Փոլկլորը նույնիսկ, կասեցինք, կազմում են ազգագրութեան բաղկացուցիչ մասը:

Ուստի Ֆոլկլորային նյութերը մեր նպատակի համար ոգտագործելիս, այն է՝ նախնադարյան հասարակութեան կենցաղը մեր

մտապատկերներում վերականգնելու և այն դարձնելու պատ-
մության առարկա, պետք է ղեկավարվենք նույն հվմնական
հետազոտական յեղանակով, ինչ վոր կիրառում ենք ազգագրու-
թյան մեջ, այսինքն պատմա-համեմատական և վերապրուկների
կամ մնացուկների յեղանակներով:

VII

Լեզու. ակասեմիկ Ն. Մառի ուսմունք

Ազգագրության և ֆոլկլորին կից կարևոր աղբյուր է հան-
դիսանում նախնադարյան պատմության համար նաև լեզուներ:
Լեզուն մարդկային հարաբերությունների մի գործիք, մի միջոց
է, վորով կապվում են հասարակության անդամների նյութական,
հոգևոր ու մտավոր շփումները: Լեզվի մեջ է արտահայտություն
ստանում մարդկային հասարակության ամբողջ զարգացման
սակայն վերնաշենքը: Սակայն ինքը լեզուն, ինչպես ապացուցում
է Փ. Ենգելը, ծագել ու զարգացել է մարդկային աշխատանքի
պրոցեսում: Հետևապես նախնադարյան հասարակության կյանքն
ու ձևերը, նրա սոցիալ-տնտեսական զարգացումը, վորի մասին
մեզ չեն հասել ստույգ տեղեկություններ, կարող են պատմա-
կան ուսումնասիրության առարկա դառնալ, յերբ ղիմում ենք
նաև լեզվական հետազոտության, վորով զբաղվում է լեզվա-
գիտությունը՝ լինելով Կոստիկան:

Նախնադարյան մարդկային խմբերի լեզուները մեզ չեն
հասել. լավագույն դեպքում այդ նախնադարյան լեզուները մարդ-
կային խմբերի զարավոր զարգացման ընթացքում վերափոխվել են
ու մեզ հասել միանգամայն այլ ձևեր ընդունած: Սակայն այդ
վերափոխված ձևերով մեզ հասած և այժմ գոյություն ունեցող
խոսակցական լեզուների հիմքում կարելի յե գտնել մնացուկներ,
վորոնց վերլուծումը յերևան է հանում նրանց հնադարյան ար-
մատները: Մյուս կողմից՝ արդի «վայրենի» ցեղերի լեզուներն
եւ լինելով արխայիկ կամ պրիմիտիվ սոցիալ-տնտեսական մի-
ջավայրի արգասիք, արտադրական ցածր աստիճանի հարաբե-
րությունների ցուցանիշ, վորոնք վորոշ չափով հոմանիշ են նախ-
նադարյան կուլտուրային, կարող են շատ բան պարզել նախնա-
դարյան պատմության տեսակետից: Յեթե «վայրենի» ցեղերի

ազգագրական հետազոտությունները հիմք են տալիս կոանելու.
և հավանական յենթադրությունների հանդեպ նախնադարյան
հասարակության մասին, ապա նույնպիսի նշանակություն են
ստանում «վայրենի» ցեղերի լեզուները:

Արդի լեզվագիտությունն ուսումնասիրում է վնչ միայն
կենդանի ժողովուրդների լեզուներն, այլ և անեացած, «մեռած»
լեզուները: Այդ հնարավոր է լինում համեմատական լեզվագի-
տության միջոցով: XIX դարի սկիզբները, նման բնադիտության
մեջ առաջացած հնեաբանություն (պալեոնտոլոգիա) կոչված
գիտական ղիսցիպլինի, համեմատական լեզվագիտության մեջ
ել առաջացավ հատուկ գիտական ղիսցիպլին՝ լեզվագիտա-
կան հնեաբանություն:

Լեզվագիտական հնեաբանության շնորհիվ հայտնաբերվում են
այնպիսի մարդկային ցեղեր, նախաժողովուրդներ, վորոնք ան-
մատչելի յեն յեղել թե հնագետների և թե ազգագրագետների
ուսումնասիրությանը, վորովհետև այդ նախնիներից չեն մնացել
իրեղեն, ել չենք ասում զբավոր, հուշարձաններ:

Այդպիսի ուսումնասիրության բազմաթիվ փորձեր ու հե-
տևանքներ ենք տեսնում, այսպես կոչված, հնդկա-յե վրոպա-
կան լեզվագիտության մեջ: Այս լեզվագիտական դպրոցի
ներկայացուցիչները կարծում են, թե գոյություն է ունեցել
ինչ վոր Հնդկա-յեվրոպական ժողովուրդ իր նախահայրենիքով
և իր նախալեզվով: Իս բուրժուական գիտության պտուղներից
մեկն է, կապված ոսասայական ու միզբացին (գաղթում) թեո-
րիաների հետ: Հնդ-յեվրոպական լեզվագետները մոտենում են
իրենց թեորիային իղեպիստական պատմահայեցողության տե-
սանկյունով, լեզուն համարելով հոգու գործիք, ինքնաբավ մի
հասկացողություն: Նրանք լեզուների փոխադարձ հարաբերու-
թյան ինդիքը լուծում են, բացատրելով լեզուների ծագումը մի
ընդհանուր նախալեզվից, վոր տրոհվում և տարբալուծվում է գըլ-
խավորապես միզբացիաների շնորհիվ առանձին լեզվական ընտա-
նիքների, վորոնք տարածվում են աշխարհի բոլոր կողմերը:

Տրամագծորեն հակառակ տեսակետի վրա յե խարսխվում
հաբեթական լեզվագիտությունը, վորի հիմնադիրն ու
զարգացնողն ակադիմիկոս Ն. Մառն է: «Հարեթական» անունը
պայմանական տերմին է: Հարեթական լեզվագիտությունը նոր

ուսմունք ե միասնական լեզվաստեղծական (գլխատոգոնիկ) պրո-
ցեսի մասին, վոր մեկնում ե բազմաթիվ լեզուներէց, դիմելով
գեպի մարդկության ապագա միասնական համեմատական լեզուն:
Հարեթական համեմատակաւ լեզվագիտությունը հենված ե գիական-
տիկական մատերիալիստական տեսակետին ե մոտենում ե լեզվին
վոչ իբրև առանձնացած գոյություն ունեցող մի յերևույթի, վոր իբր
թե ունի զարգացման իր սեփական հատուկ որոնքները: Լեզուն այս-
տեղ տեսության ե առնվում, վորպես հասարակական զարգացման
հետեանք. լեզուն հասարակական արտադրական հարաբերու-
թյունների արտացոլումն ե, վորոնք իրենց հերթին պայմանա-
վորվում են արտադրողական ուժերի զարգացումով:

Հակառակ արեւմտյան բուրժուական լեզվագիտության տե-
սակետի՝ Ն. Մառն ապացուցում ե, վոր սկզբում յեղել ե վնչ թե
մեկ լեզու, այլ բազմաթիվ ցեղական լեզուներ. արդի կազմված
լեզվական ընտանիքները հանգիստանում են վնչ թե ազգակցական
խմբավորումներ, վորոնք իբր թե միասնական բնից ճյուղավոր-
վելու հետեանք են, այլ իրենց հիմնական հատկանիշներով զու-
գամբձ, միակցվող լեզուներ են, վորոնք իրենց հերթին կազմվել
են ցեղային նախորդ լեզուների միակցության ու խաչաձևման հե-
տեանքով ե վորոնք կերպոփոխվել են խոշորացած լեզվական
զանգվածներէ: Այս տեսակետից բնավ գոյություն չեն ունեցել
և չունեն լեզուների անջատ, առանձին ընտանիքներ:

VIII

Մարդաբանություն

Մարդաբանություն:—Մարդաբանություն կամ անթրոպո-
լոգիա (հունարեն անթրոպոս—մարդ, լոգոս—բանություն), ինչպես
ակներև ե բառակազմ անունից, գիտական դիսցիպլին ե, վորի
ստարկան անթրոպոգիեն էզն ե, այսինքն մարդու ծագումը ե
զարգացումը: Մարդը տեսության ե առնվում այստեղ, վորպես
բնության մի մաս ե այդ բնության պատմական զարգացման
արդյունք, զարգացման, վոր կատարվում եր հենց մարդու մաս-
նակցությամբ: Ուրեմն մարդաբանությունն ուսումնասիրում ե
մարդու բնական հատկությունները հասարակական զարգացման
տարբեր պատմական ետապներում:

Մարդաբանական ուսումնասիրությունն ուշադրության ե
առնում մարդու ֆիզիկական հատկանիշները՝ գանգը, ուղեղի
ծավալը, կմախքը, գլխի ձևերը, մաշկերի, աչքերի ու կաշվի գույնը,
մարդու հասակն, արյան գնդիկները ե այլն, անեսացած մարդ-
կային տեսակները, գոյություն ունեցող արդի ցեղերը ե սրանց
ծագումը: Այդ բոլորը կապվում են շրջապատող բնական միջավայ-
րի հետ, ուր անցնում ե մարդկային հասարակության զարգաց-
ման պրոցեսն իր պատմական ետապներով: Յեթե ազգագրու-
թյունը (ազգաբանությունը) ամբողջական ազգերի ու ցեղերի
ընդհանուր ուսումնասիրությանը ծառայող գիտական դիսցիպ-
լին է, ապա մարդաբանությունը նույն գերն ե կատարում այդ
աղղային կամ ցեղային իմբական զանգվածների արգեն առան-
ձին տարրերի նկատմամբ:

Սակայն մարդաբանությունը, վոր հիմնականում մեծ մա-
սամբ կրում ե բիոլոգիական բնույթ, իբրև պատմության աղ-
բյուր ունի յինթակայական նշանակություն. թեև մարդաբանա-
կան ուսումնասիրությունները հենվում են չափազրական թվե-
րին, վիճակագրական տվյալներին, ե առաջին հայացքից կոնկ-
րետ, ուսալ տեսողծերին, բայց ե այնպես նրա հետազոտական
արդյունքները հաճախ վիճելի ու անկայուն են համարվում:

Մարդաբանության յինթակայական ե նրա բիոլոգիական բնույ-
թը ֆաշիստական «գիտնականները» կողմից ֆալսիֆիկացիայի
յինթարկվելով դարձել ե հասարակական յերևույթների «գիտական»
մեկնաբանման հիմնական սկզբունք՝ իրենց տեսութիստական ե
դազանային նացիոնալիզմի հիմնավորելու համար:

Մարդաբանության մեջ մեծ նշանակություն ե տրվում
յերկու հետազոտական յեղանակներին, այն է՝ մարդաչափու-
թյանը (անթրոպոմետրիա) ե գանդաբանությանը (կրա-
նիոլոգիա), վորոնց միջոցով փորձում են համեմատական տվյալ-
ներ ստանալ զանազան ցեղերի, մարդկային միութույն խմբերի
ծագման ու բնական զարգացման հարցերը լուծելու ե նրանց
պատմական տեղն ու միջավայրը բնորոշելու համար:

Վերը հիշատակված բոլոր գիտական դիսցիպլինները, իբրև
պատմական աղբյուրներ, առանձին-առանձին վերցրած, անկա-
րող են քիչ թե շատ լրիվ ծառայել նախնազարյան հասարակու-

թյան պատմութիւնն ուսումնասիրելուն: Անհրաժեշտ է այդ բո-
լոր աղբյուրները՝ հնագիտութեան, ազգագրութեան, ֆոլկլորի,
լեզվի և մարդաբանութեան համադրական (սինտետիկ) կիրա-
ռումը, միացնելով նրանց մի կոմպլեքսի: Հետևապես նախնադար-
յան պատմութեան ուսումնասիրութիւնը մեր թված աղբյուր-
ների հիման վրա՝ տարվում և կոմպլեքսային յեղանա-
կով, հակառակ պարագայում մեկուսացրած ու անջատ աղ-
բյուրների վրա կառուցված առանձնակի ուսումնասիրութիւն-
ները կմնան թերի և շատ անզամ նույն իսկ անհասկանալի: Հը-
նագիտութիւնը տալիս է մեզ իր նյութական հուշարձաններով
նախնադարյան հասարակութեան սոսկ կմախքը, իսկ ազգագրու-
թիւնն ու ֆոլկլորը, նաև մարդաբանութիւնն ու լեզվագիտու-
թիւնը միտին գալիս են համակելու այդ կմախքը մտով ու
մկանունքներով և վերակենդանացնել մեր մտապատկերներում
նախնադարյան հասարակութիւնն իր բովանդակ կյանքով ու
ապրումներով:

Կոմպլեքսային յեղանակով ուսումնասիրված պատմութեան
փայլուն որինակ ենք տեսնում Փ. Ենգելսի կլասիկ աշխատու-
թեան մեջ, վոր կրում է «Ընտանիքի, մասնավոր սեփականու-
թեան ու պետութեան ծագումը» խորագիրը: Այստեղ Փ. Ենգելսը
թե նախնադարյան և թե դասակարգային հասարակութիւնների
ծագման ու զարգացման պատմութիւնը նկատել է վնչ միայն
սոսկ գրավոր-պատմական տվյալների վրա հիմնվելով, այլև մեծ
չափերով ոգտազործելով հնագիտական, ազգագրական, ֆոլկլո-
րային ու լեզվագիտական տվյալները, մանավանդ նախադասա-
կարգային (նախնադարյան) հասարակութեան վերաբերմամբ,
վորպիսի դարաշրջանը, ինչպես արդեն վերը նշել ենք, զուրկ է
գրավոր պատմական հուշարձաններից:

IX

Ժամանակագրութեան պրոբլեմներն ու պերիոդիզացիան
նախնադարյան պատմութեան մեջ

Յերբ վերը տեսութեան եինք առնում հնագիտական աղբյուր-
ները, կանց ատանք նաև նրանց թվագրութեան վրա: Մենք նը-
շեցինք, վոր հնագիտական հուշարձանների թվագրութիւնը կա-

րերը նշանակութիւն ունի նախնադարյան պատմութեան ժամա-
նակագրութիւնը վորոշելու համար և վերջինս ել իր հերթին
կարեր և նախնադարյան հասարակութեան զարգացման դարա-
շրջանները սահմանագծելու, այսինքն նրա պատմութեան պե-
րիոդիզացիան հաստատելու համար: Այստեղ ել մեր առաջ ծա-
ռանում են նույն դժվարութիւնները:

Հաղարավոր դարեր են անցել նախնադարյան մարդկութեան
կյանքում մինչև դասակարգային հասարակութեան կազմավորու-
մը: Դա մի ժամանակաշրջան էր, ուր արտադրութեան հասարա-
կական յեղանակը շարունակում էր զարգանալ վորպես այդպի-
սին, և իր սոցիալ-տնտեսական եյությամբ այդ արխայիկ շրջանը
հայտնի յի մարքսիստական պատմագիտութեան մեջ, վորպես նախ-
նադարյան-կոմունիստական ֆորմացիա: Սակայն և այնպես այդ
հնագույն սոցիալ-տնտեսական ֆորմացիայի սահմանները մեջ,
յերկար ու ձիգ դարերի հոսանքում, արխայիկ հասարակութիւնը
յենթարկվում էր վորոշ փոփոխութիւնների, ներքին շրջան-
ցումների. վերափոխվում էին նյութական կուլտուրայի և տըն-
տեսութեան տարրերը և ըստ այնմն ել հասարակական հարա-
բերութիւններն ու դադափարախոսական վերնաշինքերը: Այդ
փոփոխութիւնները կատարվում էին վնչ թե աստիճանաբար,
եվոլյուցիոն ընթացքով, այլ թռիչքային ձևով, քանակը վորակի
փոխվելով, այն՝ մարքսիստական ուսմունքի համաձայն, դիա-
լեկտիկ զարգացումով:

Այդ թռիչքային զարգացումը հարավորութիւն է տալիս
գծելու վորոշ սահմաններ նախնադարյան հասարակութեան պատ-
մութեան առանձին հատվածների միջև և նշելու նրա պատմական
պրոցեսի իրար հաջորդող շրջանները, կամ ստադիաները, այսինքն
սահմանելու նրա պերիոդիզացիան: Այս պրոբլեմը, ինչպես սպա-
սելի յեր, տարբեր կերպով են լուծում բուրժուական և մարքսիս-
տական պատմագիտները: Բացի այդ՝ հենց բուրժուական պատ-
մագիտութեան մեջ այդ պրոբլեմի շուրջը ստեղծվել է բավա-
կանի խառնաշփոթ տեսութիւնների մի կծիկ, վոր գնալով ավելի
յե խճճվում:

Բուրժուական պատմագիտութեան մեջ վաղուց ընդունված
է դանիական գիտնականներ՝ Տոմսենի և Վորսոյի համատարած
պերիոդիզացիան. ա) պալեոլիթ—հնաքարի դարաշրջան, իր

յերկու բաժանումներով՝ ստորին և վերին պալեոլիթներ. բ) նեոլիթ—նորաքար. գ) մետաղի դարաշրջան, իր յերկու բաժանումներով՝ բրոնզե ու վաղագույն յերկաթե դարերով: Ինչպես տեսնում ենք, այս պերիոդիզացիայի հիմքը կազմում է աշխատանքի գործիքների նյութը: Այս պերիոդիզացիայով առայժմ վորոշ չափով ոգտվում են նաև մարքսիստական պատմագիտության մեջ նախնադարյան հասարակութայն հարաբերական ժամանակագրությունը վորոշելու նպատակով: Սակայն այդ սխեման ինքնին անկատար է, նա խիստ կոպիտ ու պրիմիտիվ գծերով է ձևավորված, չհերկայացնելով հասարակութայն զարգացման լրիվ պատկերը:

Ուստի մարքսիստական պատմագիտութայն մեջ, յերբ մեծ ուշադրություն դարձվեց նախադասակարգային հասարակութայն պատմութայն պրոբլեմներին, առաջադրվեց մի նոր պերիոդիզացիա, հիմք ունենալով վնչ թի աշխատանքի գործիքների նյութը, վոր ինքնըստինքյան մի ձևական մոմենտ է, այլ հասարակական հարաբերությունների եյությունը: Այդ տեսանկյունով մարքսիստական պատմութայն մեջ ընդունված է այլ սոցիոլոգիական պերիոդիզացիա, վորի համաձայն նախադասակարգային հասարակութայն մեջ սահմանվում են յերեք դարաշրջաններ. ա) նախատոհմային հասարակություն՝ իր յերկու հաջորդական զարգացման ետապներով՝ նախնադարյան հոտ և ապա տոտեմական հասարակություն. բ) տոհմային հասարակություն, վոր հաջորդաբար բաժանվում է մատրիարխատի—մայրիշխանութայն և պատրիարխատի—հայրիշխանութայն շրջանների. գ) տոհմային հասարակութայն քայքայումը:

Լ. Գ. Մորգանի պերիոդիզացիան

1877 թ. Լույս տեսավ ամերիկացի ազգագրագետ Լյուիս Մորգանի «Հնագույն հասարակություն» խորագրով աշխատությունը, վոր հսկայական նշանակություն ունեցավ նախնադարյան պատմութայն հարցերը լուսաբանելու տեսակետից և հեղաշրջում առաջացրեց նախնադարյան պատմութայն վերաբերյալ հայացքներում: Արդեն նրանից առաջ Կ. Մարքսն ու Ֆ. Ենգելսն արտահայտած էյին նախնադարյան եկոնոմիկայի մասին մարքսիստական

տական ուսմունքի հիմնական դրութները: Լ. Մորգանի հիշյալ աշխատությամբ յերևան յեկան թանգարժեք ազգագրական նյութեր, վորոնք փառավորապես ապացուցին մարքսիզմի հիմնադիրների գաղափարները: Ֆ. Ենգելսը շատ բարձր է գնահատում Լ. Մորգանի հիշյալ աշխատությունը: Արժեքավորելով Լ. Մորգանի աշխատությունը տոհմի եյությունը հայտնաբերելում, նա ասում է, վոր այդ հայտաբերումը ընախնադարյան պատմութայն համար նույն նշանակությունն ունի, ինչ վոր Դարվինի թեորիան կենսաբանութայն համար և Մարքսի հավելյալ արժեքի թեորիան քաղաքատնտեսութայն համար: Այդ հնարավորություն տվեց Լ. Մորգանին առաջին անգամ ընտանիքի մի պատմություն ուրվագծելու, վորի մեջ գոնե զարգացման կլասիկ աստիճանները ընդհանուր առմամբ, վորքան վոր մինչև այսօր հայտնի նյութը թույլ է տալիս, առայժմ հաստատուն կերպով վորոշված են:*) Ֆ. Ենգելսը մեծ չափերով ոգտագործում է Լ. Մորգանի «Հնագույն հասարակություն» աշխատութայն նյութերն իր «Ընտանիքի, մասնավոր սեփականութայն և պետութայն ծագումը» կլասիկ ուսումնասիրության մեջ:

Լ. Մորգանն, իր աշխատութայն մեջ տեսութայն առնելով կազմակերպված մարդկային հասարակությունը՝ սկսած նրա սկզբը ընկան առաջին ձևերից մինչև բարբարոսութայն վերջին աստիճանը, հայտաբերում է այնտեղ կոմունիստական հասարակական հարաբերություններ, վորոնք խարսխվում են տնտեսավարութայն կոմունիստական յեղանակի և ամենից առաջ համայնական սեփականութայն վրա: Այդ բոլորը նա հիմնավորում է չափազանց հարուստ ազգագրական նյութերով, վերցրած Ամերիկայի հնդիկ ցեղերի կենցաղից: Մարդկութայն զարգացման պատմութայն մեջ Լ. Մորգանը վորոշում է յերեք հիմնական դարաշրջաններ՝ վայրենություն, բարբարոսություն և քաղաքակրթություն: «Վայրենություն — առավելապես բնության պատրաստի արդյունքների յուրացման դարաշրջան է. մարդու արվեստական արտադրանքները ծառայում են այդ յուրացման համար գլխավորապես իբրև ոժանդակ գործիքներ: Բարբարոսություն — անասնաբուծություն

*) Ֆ. Ենգելս—Ընտանիքի, մասնավոր սեփականութայն և պետութայն ծագումը, էջ, 17

և յերկրագործությունն մայնելու, բնության արտադրանքները մարդու գործունեյության միջոցով աճելի մեծ չափերով արտադրելու յեղանակները սովորելու դարաշրջան: Քաղաքակրթութունը—բնության արտադրանքների հետագա մշակումը սովորելու, իսկական արդյունաբերության և արվեստի դարաշրջան»*) Այսուհետև Լ. Մորգանն առաջին յերկու դարաշրջանները բաժանում է յուրաքանչյուրը՝ սառիին, միջին և վերին աստիճանների, նայելով գոյության մրջոցների արտադրության մեջ տեղի ունեցած առաջադիմություններին:

Ահա այդ վայրենությունը և բարբարոսությունը նախնադարյան պատմության հիմնական դարամիջոցներն (պերիորդներն) են:

Բուրժուական պատմագետները, նպատակ ունենալով նրան մացնել Ֆ. Ենգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխատության արժեքը, շողակրատում են, վոր Ֆ. Ենգելսն իբր թե սմբողջովին, յուրացրել է Լ. Մորգանի թեորիան և միայն շարահյուսում է նրա ասածները: Մինչդեռ Ֆ. Ենգելսն այդ մասին արդարացի պատասխանում է. «Անհեթեթություն կլիներ, աշխատելով «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագման» վրա, սոսկ որչեղարվորեն շարահյուսել Լ. Մորգանին, և վնչ թե բացատրել նրան քրննադատորեն և ոգտագործելով նոր ձեռք բերված հետևանքները, այն շարահյուսել մեր տեսակետների և արդեն ստացված հետեվությունների կապակցությամբ»**):


Հիրավի, Ֆ. Ենգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխատության մեջ տեսնում ենք վնչ թե Լ. Մորգանի տեսակետների ու հայացքների մեքենական յուրացումն կամ նրա տեսության սոսկական շարահյուսությունը, վոչ ել նույն մեկնաբանություններն, այլ Մորգանի բոլոր հիմնական դրույթների արմատական վերամշակումն ու այն դնելը բարձր թեորետիկական մակարդակի վրա:

*) Ֆ. Ենգելս—«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» էջ 28, Յերևան 1932 թ.

***) Архив Маркса и Энгельса, КН. 1-ый стр. 251.

1. Ֆ. ԵՆԳԵԼՍ.—Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը:
2. Կ. ՄԱՐՔՍ.—Քաղաքատնտեսության քննադատության շուրջը. Յերևան, 1932, էջ՝ 3—67:
3. ЛЕНИН.— Лекции о государстве (Կա հայերեն թարգմանությունը):
4. К. М. ТАХТАРЕВ.—Сравнительная история развития человеческого общества и общественных форм. часть первая, стр. 11—89 (վոչ մարքսիստական աշխատություն է):





ՀՀ Ազգային գրադարան



NL0402963

ԳԻՆԸ 60 Կ.

Проф. Х. САМВЕЛЯН

ИСТОРИЯ ПЕРВОБЫТНОГО ОБЩЕСТВА
Институт повышения квалификации учителей
Арм. ССР, Ереван, 1938